# ՕՐԷ ՅՕՐ

## (ԽՍԵՄԲԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

---

Դեկտեմբեր 1892—Յունուար 1893 թ.

Համայն լուսաւոր աշխարհը տօնում է այսօր, դեկտեմբեր 15-ին, տիեզերահռչակ Լուի Պաստէօրի յոբելեանը.

Կովկասի մայրաքաղաքին չէ որ ամօթ կը լինէր ուրիշներից ետ մնալ, ուստի նա շտապեց աչքի ընկնող ապացոյցներ տալ իւր փառաւոր լուսաւորութեան.

«Տիֆլ. Լիստ.»-ը, եռանդով յափշտակուած, վերագրեց Պաստէօրին չեղած վաստակներ ֆիլոկսերայի վերաբերեալ, «Մշակ»-ը Ջրգողութեան (ВОДЯНКА?) վերաբերեալ, իսկ «Տարազ»-ը միամտաբար կրկնեց «Մշակ»-ի հաղորդածը.

Թիֆլիսի բժշկական ընկերութիւնը, գիւղատնտեսականը, կենդանիների պաշտպանողը յատուկ նիստեր ունեցան ի պատիւ Պաստէօրի և արշինանոց ուղերձներ յղեցին յոբելեարին «Ասիայի խոր խորքերից».

Այս ընդհանուր ցնծութեան ժամանակ անախորժ դեսոնանս կազմեց պ. Շաւրովի ապլոմբաւոր արտասանած ճառը. Գիւղատնտեսական ընկերութեան նիստին պ. Շաւրովը հրապարակական ներումն շնորհեց Պաստէօրի արած բոլոր սխալներին.

Ո՞րքան պիտի ուրախանայ Պաստէօրը այս մեծահոգի վեհանձնութեան համար Շաւրովի կողմից, Շաւրովի, որի արած սեփական գիւտերը այնքան միկրոսկոպիկական են, որ ոչ մի խոշորացոյց դեռ չի կարողացել նրանց յայտնի կացուցանել.

*
* *

Գոյութիւն վայելող «Արձագանք»-ը [1]) մի յօդուած է նուիրել «Մշակ»-ի հանդուցեալ խմբագրի մատուցած գրական ծառայութիւններին, որով գովելի անկեղծութեամբ ջնջում է իւր 11 ամեայ բոլոր գործունէութիւնը.

---

[1]) № 4, 1893 թ.

[2]) Զկրպատել ծեծեց.

«Դր. Արծրունու գրած սխալներին, նորա չափուած ծուռ ու թիւր մաքերին մի՛ չ ո դ ր ա կ ա ն ո ւ թ ե ա մ բ զ բ ա ղ ւ ո ղ ն ե ր ն աւելի մեծ նշանակութիւն են տալիս, քան այդ հարկաւոր է։ Կարծում էին թէ Դր. Արծրունին այսօր մի սխալ միտք որ չգտնենք, վաղը ժողովուրդը կը գործադրէ և զորանից մեծամեծ վնասներ կառաջանան։ Իրականութիւնը չափանի բան է, չէր արդարացնում այդ։»

Ինչպէս որ Գոգոլի հերոսուհիներից մէկը, ունտերօֆիցերշան, ինքն իրան «ВЫСѢКЛА» [2]), այնպէս էլ արեց «Արձագանք»-ը իւր անձի հետ իւր այդ «չ ա ր մ ա ր» մի նկատողութեամբ։

Հայ գործիչը, հայ խմբագիրը ինքը իւր ձեռքերով դատափետում է իւր՝ 11 երկար տարիներ պարբերաբար գրածը... 11 երկար տարիներ «Արձագանք»-ը լցնում էր իւր էջերը պատասխաններով, բողոքներով, առաջնորդողներով, նամակներով, ընդդիմախօսութիւններով, նկատողութիւններով ընդդէմ Արծրունու, գիտենալով հանդերձ, որ իւր գրածը «իրականութիւնը չէ արդարացնում», բայց և այնպէս անում էր որովհետև... որովհետև... ես ինչ գիտեմ ինչու...

* * *

Փորձեցէք Թիֆլիսի հասարակութեանը առաջարկել օգնութեան ձեռք կարկառել թէկուզ ձմեռուայ ցրտից պատսպարելու աղքատ դասակարգը—և դուք կամ պարզ ի պարզ մերժողական պատասխան կը ստանաք, կամ կոկոռւմներ կը լսէք փողի պակասութեան վրա։

Բայց միևնոյն ժամանակ գիտէք արդեօք թէ նոյն «անփող» հասարակութիւնը ինչ գումարներ է շռայլում օպերայի վրա։—Ամառվան մօտ հարիւր հազար ռուբլի։ Եթէ չէք հաւատում ահա ձեզ և հաշիւը։

Արքունական թատրոնում տեղի են ունենում շաբաթական չորս ներկայացում, Արտիստականների բանկի թատրոնում շաբաթական 6 ներկայացում, ասել է շաբաթական մօտ 10 ներկայացում, իսկ ամսական մօտ 40։ Եթէ բազմապատկենք 2500 ռուբլ գումարի վրա (երկու թատրոնները, միասին առած, հաշիւ թէ պակաս մուտքի վճարումներն, մանաւանդ որ, եթէ չեմ սխալւում, մէկի անտոկրատական գները սովորական են դարձած) կը ստանանք մինչև կլոր 100.000 գումարը։ Դրա մէջ չեն մտնում այն կամօլին ընծաների արժէքները, որոնք մատուցանւում են դ ի ւ ա հ ա ր ո ւ ա ծ ն ե ր ի կողմից օպերայի diva'ներին [1]) յանձին մի Ենգլանդի, մի Գրիզինէ դը Մոնբազոնի, մի Իվանովայի և այլն...

---

[1]) Diva գլուխ ասում է աչքի ընկնող և առաջնակարգ—գլխաւորապէս գեղեցիկ դերասանուհիների մասին։ ~~Հրաշք բանից է~~

Ի լրումն խայտառակութեան ֆրանսիական կանկանալին օպերետին ներկայ են լինում իրանց ծնողների հետ և հարսնացու զ ա ր գ ա ց ա ծ, այո, զ ա ր գ ա ց ա ծ օրիորդներ, որոնք հրճւում են լսելիս և տեսնելիս Գրիզիէ դը Մոնբազոնի ասբէն ծռմռած երգելը. Исматритэ сдэсъ, исматр итэ тамъ, Иправитца ли это вамъ?..

*
* *

Հոսհոսները Պոլիս են, հոսհոսութիւնը պոլսեցիներին է յատուկ. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները» կրկին և կրկին անգամ հաստատեցին մեր այդ ինքնասիրութիւնը և արժանաւորութիւնը խաղաղ կարծիքը.

Իսկ հոս, մեզանում, հոսհոսութիւն չկայ... Մեծապատիւ պարոններ նմանապէս չկան.

Բայց եթէ դեկտեմբեր, յունւար և փետրւար ամիսներին դուք կը պատահէք մեր լրագրերի ներքին քրոնիկներում այսպիսի լուրերին՝ «Սրտի ամենամեծ բերկրանքով աճապարում ենք հաղորդել մեր յարգելի ազնիւ ընթերցողներին որ Բաթումաբնակ մեծապատիւ պարոն Պապուր Առաքելեանցը բ ա ց ի ի ւ ր հ ա մ ա ր մ ի օ ր ի ն ա կ մեր թերթին գրելուց գրել է նաև մի օրինակ իւր բարեկամ Արամ Մխակեանցի համար,— դէ իհարկէ, այդ հանգամանքը ոչ մեր խմբագիրների հոսհոսութիւնն է ապացուցանում և ոչ էլ մեծապատիւ մուրացկանութիւնը.

*
* *

Աչքներդ լոյս, ընթերցող. Մի քանի օր առաջ գ ո ր ծ ի չ ի փառաւոր դիպլոմ ձեռք բերելուց յետոյ, «Նոր-Դար»-ի խմբագիրը յայտարարում է այսօր, յունւար 15, որ ա ր դ է ն ս ա ն ց ո ւ ա ծ է գ լ ո ւ խ գ ա ղ ա փ ա ր ա կ ա ն կ ո ւ ս ա կ ց ո ւ թ ե ա ն. Հանդիսի ծիսակատարութեան մանրամասնութիւնները և գահակալութեան օրը կը յայտարարւի շատ շուտով...

*
* *

Վայ մեզ, վայ. մօտ է մեր կորուստը, քանզի մեզանում «Անթիւ նոր հաւեր են դուրս եկել, որոնք երկաթէ ձւաներ են ածում». Մեր հին նահապետական կեանքի դարևոր սիւները խախտւել են. Կրօնն այժմ աւելորդ «անպաշտութիւն» է համարւում, իսկ եկեղեցին «հնացած» և «փտած» հաստատութիւն. «Առաջ» գնալով կազմել ենք շատ կուսակցութիւններ,— որտեղ «երկու հայ» կայ, այնտեղ գոնէ «երեք կուսակցութիւն» պէտք է բուսնի. Ունինք այսպէս անւանեալ «խաւարամիտ» կուսակցութիւն, ունինք նաև ազատամիտ (կարդացէք քռսամիտ) կուսակցութիւն, ունինք

«կարճամիտ» և մինչև անգամ «անմիտ» կուսակցութիւններ։ Շատ կուսակցութիւններ ունինք, մեզ պակաս է միայն մի շատ «չնչին» բան,—այն է եղբայրական միութեան կուսակցութիւն...»։

Ո՞ր կարճամիտ և անմիտ հայը կը համարձակուի այս անգին մտքերը պառաւական և ոչ թէ պատուական խրատներ անուանել. քանի որ դրանց հեղինակը է պրոֆ. Ս. Եղիազարեանցը [1])։

Բայց որ քու բաղդիցն է, որ կենդանաբար պալատանի գաղտնիքը ճանաչող հայ պրոֆեսորը մինչ օրս անյայտ է մնացել Ղազանում ոչ միայն մեզ հայերիս համար այլ և Եւրոպայի, ուր առաջադիմութիւնը վաղուց է որ կանգ է առել, ուր, իրաւ որ, անթիւ և անհամար կուսակցութիւններ իրար միս են ուտում և իրար ոսկր կրծում... Սակայն՝ ձն անդր առաջ, պարոն պրոֆեսոր. լաւ է ուշ քան անագան՝ կրկնեցէք կրկին և կրկին անգամ ահեղագոչ ձայնով ձեր հրաւէրը, ցրուեցէք շրջաբերականներ և թող խրախճանայ ձեր փայփայած եղբայրական միութիւնը և դուք, իբր ամենաարժանաւորագոյնը, ընտրեցէք մշտական և անփոփոխ պարագլուխ՝ խաւարամիտներից, քաամիտներից, կարճամիտներից և անմիտներից կազմած եղբայրական միութեան...

*
* *

«Անտիկա» բաների (рѣдкости, rareté) ժողովող և սիրող չը լինելով հանդերձ, ես դէմ չեմ, այնուամենայնիւ, Օրէցօրումս նշանակել դրանցից այնպիսիները, որոնք համահայկական նշանակութիւն կարող են ունենալ մեր թերթերի հայագիտութեան աստիճանը, դոցա մամմութային [2]) տրամաբանութեան հրէշաւորութիւնը և «եղբայրական միութեան» և բարեխղճութեան չափը որոշելու համար։

«Արձագանք»՝ 1892 թ., № 140, առաջնորդողում. «ինչպէս յայտնի է, մենք դատի ենք կոչել «Տարազի» պ. հրատարակչին մեզ զրպարտելու համար»։

Մինչև այժմ կարգին մարդիկ գանգատւում էին զրպարտուած լինելու համար, իսկ «Արձագանքը»—դատարանով է պահանջում, որ մարդիկ գան ու իրան զրպարտեն!

«Նոր-Դար»՝ 1892 թ., դեկտեմբեր 22-ի բանասիրականում. «Բիէրնստիօրնէ Բիօրնսոնը չը զանազանելով (?) խորին գիտնական կրթութեամբ, չանցնելով հարկաւոր մտաւոր դիսցիպլինան (?), բայց միենոյն ժամանակ

---

[1]) «Արձագանք» № 10, 1893 թ.։

[2]) Mammouth, мамонтъ, փղի ցեղի մի կենդանի հրէշաւոր մեծութեամբ։

*տոգորուած լինելով բանաստեղծական ինդուիցալի (ինտուիցիալի ?) մեծ ընծալով (?),—կարողացաւ իւր հայրենի ժողովրդին գլուխ կանգնել (?), կարողացաւ դառնալ նրա քաղաքական առաջնորդն (?), և տալ իւր բարոյական համոզմունքներն ընթերցողների ինքնակիրթ շրջանին։*

*Չէ որ սա ևս զուտ հայերէն է և իւր օրինակելիութեամբ յատկապէս գրուած է և տպուած «Ն ո ր-Դ ա ր»-ում՝ «Մուրճ»-ի Օրէցօրի համար!!?*